

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



91092  
21646  
1508

ԿՐԵՅՍԵՐ

ԱՎՈՐՈՐԱ

ՆԿԱՐ ԻՆՉԵՄՏԵԿԻ

891.710  
Շ-94

ՊԵՏՐՈՍ 1932 ՅԵՐԵՎԱՆ



ԱԿ

ՏԵԿՍՏԸ՝ ՅԵ. ՇՎԱՐՅԻ

ԹԱՐԿՄ՝ ԱՐԵ. ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆԻ

Պետերբուրգում եր:

Հսկայական գործարանի մոտ յերեք ծխնելույզովոր մի կրեյսեր եր կանգնած: Կրեյսերի վրա այնպիսի թրթիկ-չրթիկոց եր բարձրացել, ասես դա վոչ թե կրեյսեր եր, այլ՝ դարբնոց: Այնքան շատ բանվոր եր աշխատում այնտեղ, վոր թվում եր վոչ թե ուղիղնալ ե, այլ՝ գործարան: Իս «Ավրորա» կրեյսերն եր, վոր Ֆրանս-ուղևական գործարանում վերանորոգության եր յենթարկվում, քանի զեռ Բայթիկ ծովը սառույցով եր պատած:

Կրեյսերի նավապետը Ղաֆուրեն հայհոյում եր շարունակ 1917 թվի ձմեռն անհանգիստ ձմեռ եր: Շատ գործարաններ գործադուլ եյին հայտարարել: Քաղաքում յուրեր եյին պտտում, վոր շուտով ընդհանուր գործադուլ ե ծագելու: Բոպե առ բոպե խռովություններ ու ապստամբություն եր սպասվում: Իսկ կրեյսերի վրա բազմաթիվ բանվորներ կային: Նրանք ամբողջ որը նավաստիների հետ եյին լինում:

— Հեռեցեք, հսկեցեք, — հրամայում եր նավապետը, — թույլ մի տվեք նավաստիներին բանվորների հետ քաղաքականության մասին խոսել: Մի բան վոր նկատեցիք, անմիջապես զեկուցեցեք ինձ:

Բայց կրեյսերի վրա կարծես ամեն ինչ խաղաղ եր:

Փետրվարի վերջերին նավապետը քաղաքից վերադարձավ գունատ և հուզված:

Նա սպաներին հավաքեց իր կայուտան:

Կրեյսերի վրա յուրթյուն եր տիրում: Բանվորներն այդ որն աշխատանքի չեյին գուրս յեկել: Նրանք գործադուլ եյին հայտարարել:

Նավապետը կողպեց կայուտայի շուռն ու ասած սպաներին:

— Նավից վոչ մի նավաստի բաց չթողնեք: Քաղաքում ապստամբություն ե:

Իսկ նավաստիները խմբված նավամատուցում, ականջ եյին դնում քաղաքից յւլոյ ձայներին:


Քաղաքից հրաձգություն եր յսվում: Ծաթ ձաթում եյին գնդացիները:

— Տես, հրդեհ:

— Այո, վիթխարի հրավառություն ե:

— Ինչպես յերևում ե, սկսվեց:

— Այո, սկսվեց:




31646

Հետևյալ որը բանվորների ահագին բազմությունը գրոշակներով՝ շարժվեց քաղաք:

Նրանք քաղաք եյին գնում, իսկ նավաստիները նավի վրայից նայում եյին նրանց յետևից: Զուր չեր, վոր նրանք ամբողջ ձմեռ միասին եյին յեղել: Յուրաքանչյուր նավաստի հասկանում եր, վոր քաղաքում վճռական կռիվ ե սկսվել ցարական իշխանության դեմ: Թե՛վ չնայած նավից հեռանալու արգելքին, նավաստիները վազեցին բանվորական շարքերի մոտ:


— Ընկերներ, մենք ձեզ հետ ենք, — ասացին նավաստիները:



Գիշերը գործադուլավոր բանվորների առաջնորդները ձերբակալվեցին. նրանց բերեցին կրեյսեր ու փակեցին կարգերում:

— Կրեյսերը բանտ չե, ազատեցեք բանվորներին, — հայտարարեցին նա-  
 փաստիները նավապետին, սակայն նավապետը դեռևս չեղ հասկանում, փոր-  
 իր իշխանութիւնը վերջացել է. նա մերժեց:


Գիշերը Կեկսիոյմյան գնդի պահակախումբն յեկավ ձերբակալվածներին  
 տանելու. կրեյսերի հրամանատար գնդապետ Նիկոլսկին և լեյտենանտ Ազրա-  
 նովիչը կանգնեցին տախտակամածի մոտ՝ ատրճանակները ձեռքներին. Բան-  
 վորներին գուրս բերեցին. նավաստիները «ուռա» բազականչեցին ու վրա-  
 ընկան գիւնվորներին. Անմիջապէս պայթեցին ատրճանակները. կրակում ելին  
 Ազրանովիչն ու Նիկոլսկին. Մահացու վերավորված մի նավաստի կրեյսերից  
 ցած գրորվեց սառուլցի վրա: Զինվորներին հաջողվեց ձերբակալվածներին  
 տանել. Բայց դա սպաների վերջին հաղթանակն էր. Միքանի որից Նիկոլսկին  
 սպանվեց, իսկ Ազրանովիչը վզից վիրավորվելով, մեռած ձեռքով ու ազատ-  
 վնց, կրեյսերի վրա իշխանութիւնն անցավ նավաստիներին:  
 «Ավրորա» կրեյսերը պահակ կանգնեց հեղափոխութեան:



Թագավորն ընկավ, բայց իշխանութեան դեկը մնաց կապիտալիստների  
 ձեռքը. Փետրվարից մինչև Հոկտեմբեր բանվորները, նավաստիներն ու ցին-  
 վորները պայքարում ելին ժամանակավոր կառավարութեան՝ բուրժուական  
 կառավարութեան դեմ:

Հոկտեմբերին արդեն պարզ էր, փոր բանվորներն իշխանութիւնը գրա-  
 վելու յեն:


Կերենսկին՝ ժամանակավոր կառավարութեան առաջին մինիստրը, վճռեց  
 ամբողջ ուժով կռիւլ պրոլետարիատի դեմ. նա հրամայեց գատել Նիկոլա-  
 կսկի կամուրջը, փորպետդի բանվորները չկարողանան քաղաք մտնել. Խորհրդ-  
 դի Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն հրամայեց «Ավրորա» կրեյսերին վե-  
 րականգնել յերթեվեկութիւնը Նիկոլաևսկի կամուրջով. Հոկտեմբերի 24-ին  
 «Ավրորան» շարժվեց քաղաքի վրա. Հսկայական կրեյսերը՝ իսկական լողացող  
 մի ամբողջ զանգաղ լողում էր Նևայով. Չախ ափով, կրեյսերին համընթաց,  
 գնում ելին 2-րդ Բալթյան Ֆլոտի գորբերը, իսկ աջից Դերյաբինսկի գորա-  
 նոցի նավաստիները. Կամուրջը պահպանող յունկերները տեսնելով «Ավրո-  
 րան», փախուստի դիմեցին. նավաստիները միացրին կամուրջը՝ Ռազմա-Հե-



դափոխական Կոմիտեյի հրամանը կատարվեց: Իսկ Չմեռային պալատն ամբողջի փոխվեց: Պալատի դահլիճներում դրված էին գնդացիները, ուժաձիգներ, թնդանոթներ: Ժամանակավոր կառավարութիւնը պատրաստվում էր կռփի «Ավրորան» կանգ առաւ Չմեռային պալատի դիմաց: Նրա հրանոթների բերաններն ուղղված էին պալատի վրա: Հոկտեմբերի 24-ի յերեկոյան կրեյտեր յեկավ ընկեր Սնտոնով-Սմսեյենկոն: Նա հազարդեց Ռազմա-Հեղափոխական Կոմիտեյի նոր հրամանը՝ վաղը զուլյթել պալատը: Ազգանշանը կլինի համազարկ Պետրոպոլիսյան ամբողջից: Սյդ ազգանշանի վրա «Ավրորան» կրակ է բացանում պալատի վրա: Սկզբում դատարկ արկերով, իսկ յեթե հարկ լինի նաև ռազմական արկերով:

Հոկտեմբերի 25-ին, յերեկոյան ժամի ութ և կեսին Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն առաջարկեց ժամանակավոր կառավարութիւնն անձնատուր լինել: Ժամանակավոր կառավարութիւնը չընդունեց առաջարկը: Յուճկերների ու կանանց հարվածային գումարտակը պատրաստ էին պաշտպանելու պատար մինչև արյան փերջին կաթիլը:

Սկսվեց կռիվը: Յուճկերներն ու հարվածայինները մահացու կրակ բաց արին հարձակվող նախաստիներն ու զինվորների վրա: Հարձակվողների կրած կարուստը մեծ էր, իսկ պալատը պաշտպանողները թագնված փայտի կույտերի յետև, կրակում էին ավելի ու ավելի փտահ ու մահացու:



«Ավրորայի» նավապետական կամրջակի վրա յեն կամխարը, նավային կոմիտեն: Թնդանոթաձիգները պատրաստ՝ սպասողական կանգնած են հրանոթների մոտ: Բայց «Ավրորան» չի կրակում: Ազդանշան չկա:

Պալատի լուսամուտները խավար են: Վոչ մի լույս: Պալատի մոտ հրաձգութունը շարունակվում է ու բորբոքվում: Յե՛րբ է ազդանշան լինելու: Հրապարակում արդեն իսկական կոիվ է գնում:

Ազդանշան: Կամրջակից հրաման են տալիս:

Կուրացուցիչ լույս: Ահռելի փորոտումը տարածվեց քաղաքի վրա: Հրապարակում մի ակնթարթ լուսթյուն տիրեց և հանկարծ լավեց խլացուցիչ ուռա՝ ու «Ավրորան» համազարկ տվեց վեց թնդանոթներից: Արկերը դառարկ ելին, սակայն ձմեռային պայտառում շփոթութուն տիրեց: Պալատի պաշտպանները փախուստի ղիմեցին: Պալատը գրավված է: Ժամանակավոր կառավարութունը ձերբակալված:

ԱՄԲՈՂՋ ԻՇԽԱՆՈՒ ԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ!



Իսկ Սմոլնիում նիստ է գումարել Խորհուրդների Յերկրորդ Համագումարը: «Ամբողջ իշխանութունը խորհուրդներին» — փորոշեց համագումարը: Համագումարը ժողկոմխորհ ընտրեց: Լենինը՝ Ժողկոմխորհի նախագահ: «Ավրորան» իր ներկայացուցիչներին ուղարկեց համագումար: Կրեյսերն իրեն ամբողջովին տրամադրում էր նոր կառավարության:


Համագումարը գիտեր, վոր խորհուրդների համար մղվող կոիվը դեռ վերջացած չէ: Իեռ շատ պիտի բաղխվեյին բանվոր դասակարգի թշնամիների հետ: Յեվ համագումարը գիտեր, վոր նոր կոիվներ սկսելիս, նավաստիներն սուռջին շարքերում կլինեն:



Հոկտեմբերի 27-ին Խորհուրդների իշխանութեան զեմ ապստամբեցին յունկերները: «Ավրորա» կրեյսերի նավազորը կոխում էր ապստամբների զեմ. նավաստիներ Բակինովսկին, Շեչենկոն, Մակսիմովը, Պեպլուգալովը կոխում էին առաջին շարքերում... Նրանք ընկերներով հարձակվեցին զրահապատի վրա ու գրավեցին այն դատարկ ձեռքերով: Յունկերների ապստամբութիւնը ճնշվեց:



Միքանի որից նավաստիների շոկատները Պետերբուրգից շարժվեցի են Մոսկվա: Խորհուրդների համար մզվող կռիվը բորբոքվում էր: Թշնամիները հարձակվում էին ամեն կողմից: Յե՛վ ամեն տեղ, բոլոր ճակատներում, առաջին շարքերում կոխում էին Հոկտեմբերյան հեղափոխության հերոսները՝ Կարմիր Կրոնշտայնի նավատորմի նավաստիները:



4519

75407



Է. Մարտի  
 կրեյսեր  
 Սիրոս  
 1935 ՍՍՀՄ, Երևան

Պատկեր № 1985 Գրառույթ № 7033

Տիպա՝ 1000 Հիմ. Պատկերաճի Գառ. №